

ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 10

1 Սեպտեմբեր 1891



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱՐԱՆ

ՃԻՎԷԼԷԿԵԱՆ

1891

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



1. ՄԻՐՈՅՆ ԱԹԱՆԱԳԻՆՆԵՍՅ ՀՍՅՐԱՊԵՏԻ ՎՐԱՅ կարևոր դիտողութիւններ.— Սահակ Ծ. Վ. Հասէան
2. ՎԵՐԵԼՔ ՅԱՍՏՂԻԿ ԼԵԱՌՆ .— Ս. Վ. Հասէան
3. ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲԱՆԻՆ ընդ գերբնական կրօնից . (Շար.) — Պէտրոս Վ. Գոյանէան
4. ՄԱՐՄՆԱՄԱՐԶ Ի ՊԷՏՍ ԱՄԵՆԵՑՈՒՆ (Շարայարեւի) . — Յովհ. Վ. Ասէֆեան:

Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Է Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Երկրորդ Տարի

թիւ 10

1 Սեպտեմ. 1894

Մ ր ք ո յ ն

Ա.Թ.Ա.ՆԱԳԻՆԵԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎՐԱՅ

ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍԱԿԷՏՈՎ



(Շարայարութիւն) (*)

Ինչպէս կանխաւ ըսինք, Պետրքթոն զիւզը Անանտական
գաւառին արեւմտակողման սահմանաձայրը կ'ինկնայ մերձ Էյ-
պէկլիի, ութ ժամ բացակայ Սեբաստիայէն եւ նոյնչափ ալ եւ-
զոկիայէն:

Անքեր եւ լերկ կրախառն բլուրներու մէջ հարթ գեանոց
վրայ կառուցեալ աղքատիկ զիւզ մըն է այժմ Պետրքթոն՝
թէպէտ եւ ի հառմն նշանաւոր վայր մը բլլալուն ոչ սակաւ
հետքեր կ'երեւնան ցայսօր. տխուր տեսարան մը ունի՝ զորկ
բոլորովին սաղարթաւոր ծառերէ, ընակիչք հարիւր յիսունիւ
չափ Տաճիկ ընտանիքներէ բաղկացեալ են՝ որք թէպէտեւ աղ-
քատ եւ գծուծ կեանք վարելու գոտապարտեալ են, այլ չնոր-
հիւ մարտը քաղցրաշունչ օդոց եւ աւատանոս աղբիւրներու

(*) Տե՛ս Պատկեր Բ. Տարի, էջ 31.

բարեհամ ջրոց քաջառողջ են եւ հուժկու: Երբորպիւր համբա-
ւաւոր բմբիշները, մեծագոյն մասամբ Պետրքթնոցի են: Իրենց
վկայութեան եւ չրջակայից աւանդութեան համեմատ՝ յունական
սերունդէ յառաջ եկած են, ինչպէս զծագրութիւննին եւս կը
ցուցնէ, իբր հարիւր յետուն տարի առաջ միահամուռ զեղովին
կրօնափոխութեանն զիմած, աւելորդապաշտ եւ բարուք խիստ
ապականեալ ըլլալով մերձակայից խորշիլի համարեալ են:

Հացակարօտ թշուառ սպրուտս ունին աշտուճ դարեհա-
ցով, թան ու թացանէ, զոր երկրագործութեամբ կը հայթայ-
թին: Հողերնին կրագանգուած եւ ամուլ է, նոյն խակ բարեբե-
ղուն համարուած տարիները, մէկին հազիւ հինգ արդիւնք կըբ-
նայ պտղաբերել ցորեննն եւ զարին միայն, զի զուրկ են յայլ
ամենայն կենսոգուտ բուսաբերութեանց: Յօրեանը՝ բաց ի մէկ
քանի բարեկեցիկ համարեալ ընտանիքներէ՝ ընդհանրապէս կը
վաճառեն ազանեղեաց անհրաժեշտ պէտքերը հազարու համար,
բայց ազանելիք ըսելովս չիմացուի պճնութիւնն պչրանաց սե-
թիւելի՞ որք բնաւ երբէք հիւրնկալութիւն չեն գտեր այս պիւ-
ղը եւ ոչ խակ անցողակէ երեւեալ: Արք եւ կանայք՝ որոց մէջ
ոչ ոակաւ պարզ եւ անպաճոյճ աչեզ զեղանիներ կ'երեւնան,
պնդակաղմ, տոկուն եւ տակաւակեաց ըլլալով՝ զո՞ն են իրենց
բարեղուրկ վիճակէն. չունին բնաւ փափաք պանդխտելու, որ
մին եւ խաբուսիկ յուտով մեծաշահ վաստակներու՝ մերաջնեաց
մեծ բազմութիւն մը թշուառութեան եւ անգարման կորուստ-
ներու կը մատնէ, զժրազդարար հաւաստելով իրենց վրայ իմաստ
նոյն խօսքը. «Որպէս բռչուց որ բռանի ի բունոյ իւրմէ, նոյն-
պէս եւ մարդ ստրկեաց յարժամ օտարանացէ յիւրոց տեղ-
եաց» (Առաւել. Ի. 8): Յայն սակի Պետրքթնոցիք եւ նոցա նը-
մանք թուով եւ առոյզանձն կորովով միշտ աճելու վրայ են:

Երկրագործութիւնը՝ որ միմիայն սպրանաց միջոցն է Պե-
տրքթնոցոց՝ արանց եւ կանանց հաւասար զբազմունքն է,
փարուցանը արանց, խակ հնձել, կրել, կաննել եւ ամբարեկը կա-
նանց գործն է: Քաղոց եւ կալուկուտին (*) արք մերձաւոր

(*) Անահրական գաւառի Հայ գիւղականք այսպէս կը համբէն արք-
այնն ափաները. Զէմէրի՝ Յունուար, Կոճոնի՝ Փետրուար, Մարտ՝
Մարտ, Քարնչան կամ Տէօլ՝ Ապրիլ, Մայիս՝ Մայիս, Հերկոց՝ Յու-
նիս, Լեւոնոց՝ Յուլիս, Քալոց կամ Մանկոց՝ Օգոստոս, Կալուկուտ

Պարխարեան (Չաճը պէլ) անտառախիտ դօտեւոր լերանց դա-
րեւանդներէն կաղնի (ֆէլֆ) տեւ՝ որ է կաղնուց չցօլած տերե-
ւալից տեսակ մը, մախը եւ այլ փառելիք փայտ սպլերով Սե-
րասախա կը կրեն ծախելու համար՝ որով արքունի տուրքերը,
խաչնահամարը եւ այլ կարեւոր ծախքերը կը հոգան:

Պետրքթոնի տուները առ հասարակ հողայարկ, ցած եւ
մթին են, եւ փողոցները աղտողի եւ գարշահոտ. ամէն դրան
առջեւ բլրածեւ բարձրացած կ'երեւնան արտոնելու աղբեւաց
կոյտերը՝ զոր չորնալէն յետոյ աչնան ետքնտուկին արտերը կը
կրեն վանն պարարտութեան:

Անցաւորաց աստիճակաւութեան համար մէկ քանի ըստ
կարելոյն բարեւէն առանձնականաց սենեակներ կան, ուր խոնջ
ուղեւորը կրնայ հանգիստ ընելով ոգի աճոււլ երաստով ճանա-
պարհորդութեան երկայնաձիղ տաժանելի յոքնութենէն. իսկ ճըմ-
բան երկարատեւ գիշերները բոլոր զիւղացուց ժողովատելի կը
համարին՝ ուր խմբելով մեծ եւ փոքր, բոցառատ վտառքանի գէմ
կը տարնան, ծխելով՝ կենակցութեամբ եւ առասպելական վէ-
պեր պատմելով կը զուարճանան քանի մը ժամ, եւ ապա օրի-
նաւոր լուսացում եւ հանդատի աղօթքը միաբան վճարելով կը
մեկնին ամենքը ՚ի հանգիստ քնոյ:

Հնութիւններ հազիւ ուրեք կ'երեւնան. միայն երկու գե-
ղեցիկ մարմարինոնէ տապանաքար տեսանք վրանին յունարէն
արձանադրութեամբ՝ զորս հին պատերու հիմունքներէ հանած էին
անեղծ, գտնողները՝ որոց դրան առջեւ դրուած են՝ արձանա-
դրութեանց օրինակը աճոււլ ճներեցին մեզ, կարծելով թէ այնու
զանձ գտնելու միջոց ունեցած կ'ըլլանք:

Բայց Սրբոյն Աթանաղինեայ յիշատակներ եւ աւանդութ-
իւնք խիստ շատ են խառն այլովք յիշատակօք:

Եւ նախ, զիւղին արեւելակողմը քարրնկեցիւ չափ բացակայ
ճանապարհին երկու կողմը գէմադէմ մեծութեամբ եւ ձեւով հա-
մաչափ երկու գամբանք (Մէ++է) կ'երեւնան, աղիւտակերտ՝ ներ-
քուստ եւ արտաքուստ բուռով ձեփեալ՝ որ այն կողմերը խիստ
տառտ է, հինգ կանդնաչափ երկայնութեամբ եւ նոյնչափ լայ-
նութեամբ քառակուսի շէնքեր: Աջակողմանը Պէտրքթոն պա-
պայինն է կ'ըլեն. որ գար ու կէս յառաջ, ըստ աւանդութեան՝

Սեպտեմբեր, Յանոց կամ Ա. Զոյան՝ Հոկտեմբեր, Յիսնակ կամ Ղ. Ել՝
Նոյեմբեր, Գարապէլ Ղ. Դեկտեմբեր:

հետաքրքրաշարժ դէպքը բոլոր Պէտրքթննդիք միաբերան իբրև հրաշալի մէկ պատահար մը պատմելուն համար՝ զոր մեր ասփնջական Հասան քեանեան ալ երբմամբ հատուակեց իբրև ակահաստես իւր հօրը պատահած ըլլալով առ ՚ի հաճոյարար հիւթ զուարճութեան կը յաւելում աստանօր:

Յիշեալ Հասան քեանեային հայրն էր համբաւաւոր Պէտրքթննցի Հիւսէին բմբիչը, մօտ օրերս հոչակուած Նարխանցի (էնի խոն) Սիւնն ընթիչին վարպետը՝ բարուք զեղծ եւ ապականեալ հսկայն, զոր քաջ կը ճանաչէնք: Օրինական լուացում ծով եւ աղօթք ընելը ոչ ոք տեսած էր. գիւղացիք մեծապէս վրան գայթակղած էին, Սրբոց պաշտօն յարգութիւն յայտնապէս կ'արհամարհէր իբր աւելորդապաշտ անտեղութիւն, յայն սակս ամենքն ալ զինքը զաղտնապէս «կարմիր» կը համարէին: Այս կողմերը տեղական բմբնամբ կամ թէ հաճոյ է ըսել նահապետական աւանդութեամբ՝ մեծ պատիւ եւ բարեգործութիւն կը համարի հիւրընկալութեան սենեակ մը ունենալով Աստուածառաք հիւրերը (թանկը ֆեսաֆիք) ժողովելով ճրիաբար մեծարելը. որով հիւրամեծար Աբրահամու առատաբաշխ օրհնութեանց արժանի եղած կը համարին: Հիւսէյինն ալ զուցէ ՚ի քաւութիւն իւր գայթակղեցուցիչ անբարոյականութեանց, սենեակ մը կ'ուզէ չինել, որոյ մեծ փայլ սուղը վառարանն կը համարի բաւանդ ուսուցիկ քօղին (օճաֆ Եաշֆաղ) ծաղկածեւ պարգերովը սպիտակափայլ բխերիկով եւ երկու կողմանց յնաքարերովը: Ուրիշ յարմար քար չգտնելով Հիւսէյին, Աթան Պապին մարմար գերեզմանը կը յափշտակէ արհամարհելով բոլոր գիւղացւոց աղաչանքը, եւ մէջտեղէն հաւատարաշափ կորել կուտայ վառարանին գործածութեան համար: Եւ ահա նոյն զիչերը յանուրջս կ'երեւնայ իրեն սուրբը զայրացկոտ սղառնալից զիմօք եւ կ'ըսէ անոելէ ձայնիւ թէ, «Ի պատիւ այդ ըրած անղգամութեանդ, որով մերկացուցիր իմ նուիրական գերեզմանս, զուն չարաչար պիտոր մեռնիս, եւ եթէ ետ պարճնելիք չըլլաս՝ ընտանեացդ ձեւը բոլորովին պիտոր չորցնեմ»:

Հիւսէյին զարհուրանօք արթննալով նոյն հետայն կ'զգայ մէկ սաստիկ խիթ մը աղեաց՝ որ անբուժելի եղանակաւ հեռզհեռէ սաստիկանալով, եւ երկու օրէն մահուան զուռը համնելով կը կոչէ բոլոր ընտանիքը, եւ պատմելով սոսկալի տեսիլը կը պատուիրէ անդրանիկ որդւոյն, Հասանին, որ անմիջապէս իւր զեւալը չվերցուցած, Սրբոյն տապանաքարը տեղը դարձնէ, եւ այն-

պէս չարաչար կը մեռնի բոլոր դիւղացւոց ա՛ն եւ սարսափ պատ-
ճառելով՝ որդին նոյն հետասյն հօրը պատուէրը կը կատարէ: Հա-
ւաստի՞ է թէ ոչ այս զարմանալի դէպք, եւ բան մը չեմ կրնար
ըսել, բայց մարմար տապանաքարին նոր կտրուածքը, բոլոր դիւ-
ղացւոց միաբերան վիպութիւնը, Հասան քեահեացին երգմամբ
ղուրջելը, եւ տակաւին երկու տարուան դիպուածք մը ըլլալը
չարժեցին զիս գրելու առանց ինչ խորհրդածութեան յիմմէ կող-
մանէ, թող ըմբռնէ ամենայն ոք որպէս եւ կամ:

Պետքը թոնցիք հաւանդ անյայտ ժամանակներէ սովորու-
թիւն ունին որ երբ փակին երկինք եւ երաշտութիւն պատահի,
կը ժողովին ի միասին չըջախայ դիւղացւոց հետ մէկտեղ, եօթն
աղայք կը զատին, ձեռքերնին մէկ մէկ խցի կուժ տալով, կը
հրամային որ երթան եօթը այլեւայլ աղբիւրներէ կուժերը լե-
ցնելով նոյն աղբեր խճերէն ալ ճանկ մը ձգեն կուժին մէջ, ա-
պա սրբոյն Գամբանը երթալով ամենքը միանդամայն օրինաւոր
լուացմամբ ազօթքնին կատարելէ ետքը կուժերն գերեզմանին
վրայ դրած, աքաղաղ մը կամ պոնտուկ մը գոհելով կուժերուն
ջրերը խիճերով մէկտեղ յօգս ցրցկեն, այսպէս կը հաւատան
որ սրբոյն բարեխօսութեամբ օդոյ կապանքները լուծուելով ա-
ռատ անձրեւներ կը տեղան, կը վիայեն թէ ոչ երբէք ապար-
զիւն մնացած է այս արարողութիւն, բոլոր չըջախայ դիւղացիք
ալ նոյնպէս ըմբռնած են, եւ դժուարահաւատալի դէպքեր կը
պատմեն:

Գիւղին հարաւային կողմն է մեծ քարածայրը երկանաքա-
րի ցեղէն, որոյ վրայ ինչպէս կ'ըսեն, հիմնեալ է եղեր հին բեր-
դը եւ ցայսօր աստ անդ հիմանց կրամած հետք կ'երեւնան ա-
պառածին վրայ: Այս միասլաղաղ քարալերին գագաթը անձուկ
տափարակին մէջտեղը հինգ վիմափոր կոանահասեալ դամբա-
նարան կ'երեւնան հաւատարաչտի մէկ կարդի վրայ կից իրե-
րայ 1/4 կանգուն խորութեամբ եւ երեքի չափ երկայնութեամբ,
զոր (շէնթիւր Քաշար) կը կոչեն, եւ կ'աւանդեն թէ ի հուռն Ա-
թան պաղայի ժամանակը եւ նորին ձեռակերտ վանք մը եւ եւ-
կեղեցի մը կայ եղեր՝ յորում իւրմէն յառաջ նահատակեալ հինգ
աշակերտաց օսկերքը գետեղեր է, հինգն ալ զլխովին գատարի
են այժմ, եւ զիրքերնին միաչափ ու քրխտոննէական է, այսինքն
դէպ յարեւելս երկայնեալ: Նահատակաց անունները հարցու-
ցինք, բայց չկրցան տալ, գուցէ զրոյ մէջ կը գտնուին ըսին:

Գիւղին արեւմտակողմն է այժմեան գերեզմանատեղին, ու

բոյ տապանը թէպէտեւ բոլորովին հարաւահայեաց զիրք ունին, սակայն նորին միջավայրը ցայտօր կը ցուցնեն Սրբոյն Աթանազիկոսեայ ձեռաչէն ընդարձակ եկեղեցւոյն ստուար հիմանց հետքերը, եւ անոր մէջ հրաշալի աղբիւրին աւերակները, ուստի սքանչելեօք երած հուրին պատմութիւնն ճշբօրէն վկայարանութեան համաձայն կը պատմեն: Սոյն գերեզմանատեղւոյ հանդէպ յարեւմուտս հարաւոյ կէս ժամ բացակայ է ցայտօր, հայեցի բարբառով «Բլուր» կոչուած տաճկարնակ զիւզը՝ զի մեկնակ բլուրի մը վրայ շինուած է:

Այս կրկին գիւղօրէից Պետրքթոնի եւ Բլուրի միջավայրը կանաչադարձ դաշտակ մըն է զուարճալի տեսարանով, զիւղացիք մեզ պատմեցին թէ անա այս տեղ է՝ որոյ համար մեր նախնիք Բլուրոցոյ հետ շատ երկարատեւ անհաշտ եւ արիւնահեղ կռիւներ կ'ընեն եղեր մատակաց արօտատեղւոյ համար, եւ Սուրբն Աստուծոյ իրաւախոհ ընելու համար երկու կողմանքը այնչափ յանօգուտս աշխատելէն հոքք, օր մըն ալ սաստիկ կըռիւ մը պատահելուն յանկարծ զայրացեալ յոգի իւր († քաղեալ է քէքէ) անէծք կարգացեր է այդ տեղւոյն վրայ թէ սաստի մինչեւ ցաւախտեան մատակաց երամք եւ ուրիշ այլ ամենայն կենդանիք չը կրնան բնաւ ճարակ գտնել եւ բուժանիլ անդանօր:

Եւ արդարեւ թէպէտեւ մարդաւէտ յարականաչ դաշտակ մըն է, բայց բնաւ կենդանի մը չը տեսնուիր այն տեղ արածոզ, ըստ որում հողը կաղձին (ճիւնոս) ըլլալուն համար՝ բուսածը անպիտան ոէզ մըն է վնասակար անասնոց, իսկ ոչխարաց մահացու եւս, միայն չորոցուցածը ձմեռը եղինք կ'ուտեն, եւ այն ոչ առանձինն՝ այլ յարգախառն:

Խիստ երկար եւ գուցէ ճանճրալի կ'ըլլար եթէ մի ըստ միոջէ ի զիր անցունէի Պետրքթոնցոյ եւ չրջաքնակաց պատմած անհամար հրաշքները՝ որոյ շատը թէպէտեւ կեղակարծ՝ բազմարանութիւն, նախապաշարեալ մտաց ցնորք՝ եւ ստութիւն իսկ կրնան ըլլալ, ինչպէս որ կը հաւանին ըսել քննադատք, սակայն ողջամիտ բանավարութեան սկզբունք է եւ անուբանալի ճշմարտութիւն թէ՛ կեղծիքը միշտ իրաց իսկութիւն եւ գոյութիւն մը կ'ենթադրէ, չափազանցութիւնն ալ հիմնական ստուգութիւն մը թէպէտեւ պաճուճանօք փերեւեղեալ: Նոյնպէս ալ մեր Աթանազիկոսեայ սքանչելագործ Հայրապետին դատափետեալ վարքն եւ վկայարանութիւնը՝ որ այրոյն ամենայնիւ, այս է հաւատարիմ գրութեամբ ականատես երեւելի սուրբ արանց, միա-

ձայն վկայութեամբ ամէն այլածէս Քրիստոնեայ ազգաց, ազգային նուիրական աւանդութեամբ վաւերացեալ է, եթէ ասոնք բաւական չհամարին քննադատից լծրնկէց պարանոցը խոնարհեցնելու, մանկանց տղայոց ստնդիւեցաց կենդանի վկայութիւնն ալ եթէ սաստիկ լռեցնել ուզեն, ահա քարինքն կ'ազաղակին յարամնաց անձայն վկայք ճշմարտութեան, խակ եթէ անողբանութէն անզգայագոյն լինել ցանկան, եւ ուրիշ բան չեմ կրնար ըսել եթէ ոչ իմաստնոյն խօսքը յիշեցնել, «Արհամարհողն այր ամբարտաւան է եւ ոչինչ վնարեսցես» (Ա.Տ. Բ. 5.) եւ դարձեալ «որ ինչ բան քան գրեզ գերագոյն իցէ մի՛ քննէր զեա, եւ որ ձեռնեքեց լինի տարապարտուց՝ առանց պատժի ոչ լիցի» Ա.աւի. Ժ.Ա. 21):

Սահակ Ծ. Վ. Հաճէան

Վ Ե Ր Ե Լ Զ

ՅՄԱՍՏՂԻԿ ԼԵԱՌՆ

1879 Յուլիսի 24 Երեքշաբթի օրն էր, առաւօտեան զովորար օդով մեր քաջաույգ ընկերաց հեա մեկնեցանք Երջուզ գիւղէն ի դիցանուէշն Աստղիկ վերելքի համար, վաչաց տեղեակ գեղացի մը աւնելով մեզի առաջնորդ՝ որ հետիոտս կը յառաջէր: Փիւղէն քառորդ մը վեր կ'երեւնայ հին Տորակէ քաղաքին կամ Վիմու գիւղին ընդարձակ աւերակները, որմերու հետքեր հորակոյտ աննշան բաներ, վերելքը անմիջապէս անտի կ'ըսկըտի յերան հարաւային կողմէն: Մեր ուղեցոյցին ետեւէն մեք ձիով կը յառաջէինք զատիվեր ուղղաձիգ սալայտասակ եւ լայն ճանապարհէ մը, որ չկնուած է մեծամեծ կոխածոյ զմանխտեան (սոսիւրէ) դեղնորակ քարերէ, լեռան բոլոր քարինք այս տեսակէն են. մինչեւ ժամ մը չատ դիւրաւ եւ զուարճութեամբ այս

տալայատակէն երանք՝ որ տակաւին անեղծ կեցած է մէկ մէկու կէս լախութեամբ եւ երկուքէն մինչեւ երեք կանգուն երկայնութեամբ մեծամեծ կոխածոյ քարերով, անտի ի վեր մշտնջենաւոր ձեանց եւ տեղատարափ անձրեւաց հեղեղները մեծապէս լսանգարեր են ճանապարհը, ժամ մը եւս այսօրինակ մերթ հեծեալ եւ մերթ հետեւակ դժուարութեամբ ելլելով, այլ անտի անոյր անհնար եղաւ ձիավարելը, ուտոի ստիպուեցանք հետիոտս յառաջ երթալ, ձիերը ուղեցոյցին յանձնելով շատ մեծ դժուարութեամբ եւ տաժանելի յոգնութեամբ քարէ քար ոստոտելով ձիւներու մէջէն հաղիւ կատարը ժամանեցինք երկուք եւ կէս ժամէն յետոյ, վերջին կէս ժամու տեղը մշտնջենաւոր ձիւնապատ է, ճանապարհը թէպէտեւ անկորուստ եւ անխոտոր ուղղութեամբ զաւլվեր կը տանի, սակայն մեծամեծ կոխածոյ քարերը տեղերնէն խախտած եւ իրարու վրայ դիպուած ըլլալով տեղ տեղ խոռոչներ բացուած են, յորմէ երբ խիստ դժուար եղաւ շատ անգամ ստրերնիս սահելով ձիւներու մէջ թաւալըր կը թաղուէինք, բարեբաղբալար ամառնային ամիս ըլլալով ցուրտ չէինք դպար:

Ասողիկ ընդարձակ դաշտի մը մէջ մեկնակ անցօտի կոնսձեւ բարձրացած սրածայր լեռ մըն է գեղեցիկ տեսարանով, կատարը միշտ ձիւնապատ. քսան ժամու բացակայութեամբ կը տեսնուի բարձրաւանդակներէ սպիտակափառ զլխովը իբրեւ քօղաղարդ դշտոյ բազմեալ փառայեղ վեհութեամբ՝ շուրջը եղած նսեմատիւ մթին անտառուտ լեռներուն մէջ, ութ ժամ Սեբաստիայէն ՚ի հիւսիս, նոյնչափ ալ Եւզոկիայէն ՚ի հարաւոյ բացակայ:

Լեռան կատարը սքանչելի տեսարան կը ներկայացնէ աչաց. վճիտ երկնից ներքեւ զովարար քաղցրաշունչ օդով անցադ կը զլտէինք հեռադիտաւ. չորս կողմը ընդ մեծ բացակայութիւնս Արեւմտեան հարաւային կողմէն երեսուն ժամու բացակայութեամբ Առգէոս (Էրճիս) լեռը կ'երեւնայ ձիւնափայլ կատարովը. ՚ի հիւսիսոյ կողմանէ մութ մութ ամպերու մէջէն թուեցաւ մեզ Սեւ ծովը տեսնել, որ երեսուն եւ վեց ժամ հեռի է Ունիայի կողմէն: Արեւելքէն Դաղիման (Դոլանլու) ամտառուտ լեռնակոհակները որ Բըչլան քիւրտերուն ամալանոցներն են, նոյնպէս Պարխար Պարխատրէս (Չօճը պէ) լերինք մայրեւորք Կապադովկիոյ, եւ եթէ այսպէս հաճոյ թուի կոչել, եւ Պոնտոսի միջասահմանք: Իսկ այս մննաւոր լերան շուրջը եղած ընդարձակ ծառաղարդ դաշար

զիւղորայիւք եւ առուակօք զարդարեալ աննապարար վեղեցիկ տեսարան մը կը ներկայացնեն: Չեմ յիշեր թէ բոլոր երկրագնացներս մէջ տեսնուած ըլլայ լիւս մը 6000 սոք բարձրութեամբ ծովուն երեսէն՝ որ անհուն աշխատութեան արդիւնք այսպիսի սալայատակ ճանապարհ մը ունեցած ըլլայ ուղղորդ շիտկութեամբ ստորուէն մինչեւ դագաթը: Վերելակը զարմանալեօք կը հարցնէ ինչո՞ն իրեն թէ ի՞նչ է եղեր արդեօք այս լիւսը՝ յորոյ դագաթը գիւրութեամբ ելլելու համար այսօրինակ մեծագործ սալայատակ մը շինուած է. եւ կ'ստիպուի ըսել թէ անշուշտ խիստ սրբանուէր լիւս մը սեպուած ըլլալու է 'ի հնունմ. որով մասամբ կ'արզարանան զուրպուած առասպելները, ինչպէս նաեւ Սեքաստիոյ եւ շրջաբնակ տաճկաց աւանդութիւնը, որք կը համբաւեն թէ Սեմնահասկետը (հարբէի սամ) Սեքաստիոյ մեծ մզկիթը (սա-հասի) որոյ տարօրինակ անեղ շինութիւնը բնաւ նմանութիւն չունի կոստան՝ Նկիդեցոյ կամ մզկիթի, իրեն եւ ազգատոմի՛ն տուն բնակութեան ըրած՝ ըլլալով, սոյն Աստղիկի գագաթն ալ նորէն նուիրական զո՞նավայր եւ պաշտամանց տեղին է եղեր:

Աստղիկի կատարը անձուկ տափարակ մըն է իրարու վրայ դիլուած խիտ առ խիտ մեծամեծ ապառաժներով, բուն միջավայրը կ'երեւնայ ցայտօր կիսաւեր շէնք մը քառակուսի իբրեւ քառատուն կանգուն երկաթնութեամբ եւ նոյնչափ ալ լայնութեամբ ստուար կոփածոյիւք կառուցեալ. որմերը մինչեւ չորս կանգուն բարձրութիւն, տակաւին անեղծ մնացած են, ո՞վ զիտէ քանի հազար տարուրնէ մնացած ամուր յաւիտենական շէնք է: Դռնտեղը արեւմտեան կողմէն երեք կանգուն լայնութեամբ կ'երեւնայ. քառակուսիին արեւելեան կողմը նոյնչափ բարձրութեամբ անձուկ դռնով բուն շէնքէն անջատեալ եւ կից նմին կայ բոլորակ շէնք մը, որոյ քարերն ներքուստ մրճոտեալ՝ բոլորովին սեւացեալ են, այդ բոլորակը շուրջանակի քսան եւ հինգ կանգուն է: Մեզի ծանօթ շինութեանց բոլորովին աննման է այս աւերակ, որմերուն վրայ կամ բոլորակին մէջ բնաւ խորշ մը չերեւար կամ խորանի տեղ. յարմար կը դատուի ասորուշան կարծել ինչպէս տեղական աւանդութիւնն ալ կ'ստուգէ:

Ատրուշանին աջակողմը տակաւին կեցած է ջրամբար ներքնուղեոյ լայնատարր բերանը ապառաժի մէջ կանազործեալ, այլ խձօք կոփածոյ եւ ահաղին անկոփ վիմովք խցեալ է: Յայտնի է որ լեռան զլուխը ջուր չգոնուելուն համար անհուն խորութեամբ եւ աշխատութեամբ այս ջրամբարը շինուած է

Ատրուշանի պաշտօնէից եւ ուխտաւորաց ջուր մատակարարելու զիտմամբ, ոչ միայն դազաթը այլ նաև բոլոր Աստղիկի վրայ միայն մէկ աղբիւր մը կայ ստորոտին մօտ, որ ապագամենբու մէջէն կը բլլսէ, եւ սրբոյն Աթանաղինեայ ճգնութեան տեղն է կ'ըսեն:

Մինչև ցէկս բարձրութիւն լերինն մացառներ կը տեսնուին, դաւառական բարբառով Ծորենի, Շրգաւենի, Մամխենի, Մատուրենի, Հաւկթենի կոչուած ցախերու տեսակէն: Աստ անդ ձիւնահալ տախաւանոս առուակայ եզերքը տեսանք Անահտական դաւառին սովորական ծաղկիներէն վայրի շուշան, թարան (անխառած) խնձար, բերանց, եղան շուռկ, կովուէկ, նապրօզ եւն. լեռան բնութեան եւ կազմութեան վրայ երկրաբանական տեսակէտով այլ տեղեկութիւն չեմ կրնար տալ: Անտառուտ չըլլալուն համար չորքոտանիք յաճախ չեն երեւար եղեր. Եըլաղզի գիւղացւոց վկայութեան համեմատ, խիստ ցանցառ կը տեսնուին գայլ, աղուէս, գարշահոտ գորշուկ (փօրսուխ): Վայրի այժ որ մօտակայ անտառախիտ լեռանց վրայ յաճախ կը տեսնուին՝ աստ ընաւ երեւցած չեն:

Երեք ժամու չափ Աստղիկի դազաթը դեզեց իկ եւ պայծառ օդով ու սքանչելի տեսարանաւ գուարձանալէն յետոյ երբ պատրաստուեցանք վար իջնելու, յանկարծ պարզ օդին մէջ ճերմակ ամպ մը երեւցաւ, եւ մենք ձիւրուն եղած տեղը հասած չհասած երկինք բոլոր մթաղնեցաւ սեւ ամպերով, սոսկալի շառագմամբ կարկուտ տեղալ սկսաւ ընկուզաշափ եւ աւելի մեծութեամբ, որոյ նմանը տեսած չէինք ընաւ, հազիւ հազ վիմաց խոռոչ մը գտնուելով անդ ապաւինեցանք տմենքս, բայց տեսնելով որ ողորմելի ձիւրը այն խոշոր կարկտի հատերուն սաստկապէս դաւակայ եւ ականջայ զարնելէն իրտչելով վեր կընկնին պախուրծաթափ տաղնապով, ամենուն սանձերը ձիւ գիւ իրար կապելով մեր վերարկուներովը զուխնին ծածկեցինք որով սակաւիկ մի հանդարտեցան. քառորդ մը տեւեց այդ սոսկալի կարկուտը, նոյն հետայն դարձեալ երկինք պարզեցան, եւ մեր կարկուտի զէզաղէզ կոյտերու մէջէն եւ հեղեղներէ հետիտաս անցնելով վրանիս գլխընիս լողորովին թրջած՝ ժամը երեկոցեան կէսին, յոգնած ողեսպառ դարձանք Հասան քեահեային տնետիլը՝ որ արդէն զմեզ հանգստացնելու համար ամեն կարեւորները պատրաստած էր:

Սահակ Մ. Վ. Հաճեան

ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲԱՆԻՆ

ԸՆԴ ԳԵՐԲՆԱԿԱՆ ԿՐՕՆԻՑ

(Շարայարութիւն) (*)

Գերբնական յայտնութեան կարելիութիւնն հաստատելէ յետոյ նոյն ընդ նոյն կը ծագի խնդիր թէ իբրաւնոց, այսինքն զայն յայտնութիւն (կըր իրականութիւն ունեցած ըլլայ) կրնայ մարդ անտարբեր նիւթ մը համարել, զոր ընդունելն կամ մերժելն չու- նենայ իրեն համար կարեւորութիւն մը իւր պարտաւորութիւն- ներն որոշելու եւ իւր վախճանին համեմուտ:— Կարեւոր եւ հիմ- նական խնդիր մի է բանակրօնից (rationaliste) եւ քրիստոնէից մէջ, զոր հարկ է լաւ պարզել: Վասնզի բանակրօնք բոլորովին անտարբեր աչօք կը դիտեն խնդիրը իբր թէ կարեւորութիւն մը չկրնար ունենալ իրենց համար գերբնական յայտնութեան մը գոյութիւնն, չճանչնալով երբէք նորին հաւատալիութեան ասպ- ցոյցներն քննելու պարտաւորութիւնն: Բաւական համարելով իրենց համար ճանչնալ զԱստուած բնական լուսով, եւ իրեն պաշտօն մատուցանել բնական կրօնիւք:— Մինչդեռ քրիստոն- ւայքս կը հաստատեմք ամենայն իրաւամբ թէ մարդն ազատ չէ գերբնական յայտնութեանն ընդունելու կամ մերժելու ըստ իւր հաճոյից, այլ ստիպեալ է զայն ընդունելու ըստ ամենադարձ սկզբանց նոյն իսկ ողջ բանականութեան:

Մարդիկային բանին լուսով նախադասութիւնս ասպացուցա- նելէ առաջ պատշաճ կը համարիմ յիշեցնել թէ կրօնից նկատմամբ ճանաչողութիւն ճշմարտութեան չէ միայն գործողութիւն մտաց այլեւ սրտի: «Ոջ որ անգիտ է, կ'ըսէ Բասթայ, քէ մարդ- կային կարծիք մուտք կ'ունենան ՚ի ճողին երկու կարողութեան միջոցով որ են Քրիստոս եւ Կաթոլիկ, բնական է միտք, որովհետեւ պետք

(*) Տե՛ս Պատկեր Բ. Գործք, թիւ 1:

չէր որ երբէք հաւանեի՞նք բայց եքի ապացուցեալ ճշմարտութեանց: Բայց հասարակ մասն կամքն է քեռ ընդդէմ բնութեան, որովհետեւ մարդիկ առ հասարակ ոչ քե ապացոյցով այլ հաճոյքով կը մղուին իր մը հաստատելու»: Եւ արդի կրօնական անտարբերութեան եւ անկրօնութեան գլխաւոր պատճառներէն մին այս է որ կուզէ մարդ որ իրերն իւր հաճոյից յարմարին, եւ ճշմարտութիւնն իւր կրից համոզատախանէ: Ուստի կրօնից նկատմամբ այնքան կարծիք, այնքան անտեղի մոլորութիւն ծագած են, որ եթէ եղելութիւնը մեր աչաց առջեւը չըլլար, չի պիտի կարենայինք երբէք համոզուիլ թէ մարդկային բանականութիւնն ինչպէս կրնայ հեռանալ ճշմարտին եւ բարւոյն նախնական սկզբունքներէն: Եւ յերաւի մարդկային մտաց մտար կարծեաց մէջ անաստուածութիւնն եւ ամենաստուածութիւնն ալ իրենց տեղը չեն գրաւեր: Ի վերայ այսր ամենայնի ինչ են անաստուածութիւնն եւ ամենաստուածութիւնն, բայց եթէ ընդունիլ արգաստիքն եւ մերժել սկզբնապատճառն եւ կամ պատճառն իւր արգաստաց հետ չիղթել: Միթէ բարւոյն եւ չարին զաղափարն եւ զանազանութիւնն բարոյականութեան ամենապարզ սկզբունք չեն: Ի վերայ այսր ամենայնի նիւթակերպ մարդը անբան անասնոց կարող դասելով չեն մերժեր ամեն բարոյականութեան սկզբունք, որով իրենց համար ամենայն ինչ նիւթ ըլլալով, քաբէ՞ նիւթական հաճոյքն է, եւ նիւթական ցաւն է որ չաբ կ'անուանեն:—

Այս մոլորութիւնք տեղիք չէին ունենար եթէ կրօնական վարդապետութիւնք զուտ մտաւորական ըլլային, եւ ՚ի գործնականի չծագէին պարտաւորութիւններ, որոնք կը պահանջեն կրից զսպումն, պարտաւորութիւններ՝ որոնք մարդկային մտաց հարստութիւնն չխոնարհեցնէին, եւ նոյն մտաց անտաճման անխախտութեան չար հակումն իւր սահմանին մէջ մնալու չըտիպէին:

Արդ քննենք կրօնից զաղափարն ըստ ինքեան:

Կրօնք է պաշտօն գոր պարտի մարդ մատուցանել Աստուծոյ, ամենակտորեալ էտիկէ, իւր արարչին եւ վախճանին: Մարդկային բանականութեան լուսով քննելով կրօնք երկու տեսակ կրնայ ըլլալ. բնական եւ կամ դրական որ է գեթեական եւ յայտնեալ բնական սրոյ սկզբունք, վարդապետութիւնք, միջոցք եւ վախճանն բնական լուսոյ հորիզոնէն դուրս չին ելլեր: Իսկ դրականն անմիջապէս յայտնեալ յԱստուծոյ, եւ ունի վարդապետութիւն, լոյս, օգնութիւն եւ միջոցներ, որ գերբնական են, եւ կ'ուզղէ նմանա-

պէս զմարդ գերբնական երջանկութեան, որ է յաւիտենական վայելումն Աստուծոյ երես առ երես:

Արդ ստոյգ է որ կրնար Աստուած չբարձրացնել զմեզ այսպիսի վիճակի մը, եւ այն առին մեր պարտաւորութիւն պիտի ըլլար մատուցանել Աստուծոյ այն պաշտօնն որ յայտնի կ'ըլլայ բնական կրօնիւք: Բայց երբ նախախնամութիւնն Աստուծոյ հաւճած ըլլայ գերբնական կարգի բարձրացնել զմարդ, ազտոտ կրնամ համարուիլ բանաւոր արարածն մի միայն բնական կրօնից հետեւելու:

Ո՛չ երբէք, այլ ամենայն ոք ծանր պարտաւորութիւն ունի գերբնական կրօնքն դաւանելու, անոր վարդապետութեանց հետեւելու, եւ անոր ցոյց առած միջոցներն ՚ի դորձ դնելու. ապա թէ ոչ չի կրնար հասնիլ իւր վերջին վախճանին, եւ յաւիտենական կորստեան կը դատապարտուի:

Այս հետեւութիւնն կը խռովէ զբանակրօնն, եւ չափազանցութիւն, կարճատուութիւն, եւ տգիտութիւն կը համարուի այն որ մարդկային բանին ուղիղ սկզբանց անդիմադրելի հետեւութիւնն է. անդիմադրելի հետեւութիւն, զոր մարդ կը ստիպուի ընդունելու եւ կամ պէտք է որ իւր բանականութիւնն մերժէ, այն բանականութիւն՝ որոյ գերազանց լուռոյն գովատը չափազանցութեամբ հռչակելէն չեն դադրիր բանապաշտք:

Ապացուցանենք վերոյիշեալ նախապատուութիւնն եւ հետեւութիւնն:

Մարդ բանաւոր արարած թէ՛ պարտաւորութիւնն եւ թէ՛ պիտոյքն կը զգայ կրօնից. ինքն ՚ի բնէ կրօնասէր է, աշխարհիս կարգ եւ ներգաշնակութիւնը կը հիացնէ զինքը «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ», կը ճանչնայ բանաւոր արարածն իւր արարչին հետ ունեցած յարաբերութիւնն, եւ կը ծագի իւր պարտաւորութիւնն հպատակութեան, ծառայութեան եւ կստարման կամաց նորին: Կը զգայ իւր սրտին մէջ պարագ մը, զոր չեն կարող լինել արարածք, եւ անաւասիկ պիտոյքն պիմելու առ Արարչն: Արարածն իբր արգասիք կ'ենթադրէ անհրաժեշտ սկզբնապատճառն եւ արարչն, եւ կը հետեւի պաշտօն մարդոյ որ յայտ կայանայ որ «Մարդ փառս մատուցանէ Աստուծոյ եւ Անոր հպատակի հոգւով եւ մարմնով». եւ որովհետեւ Տէրը դժառան կ'ենթադրէ, յայտնի է թէ «ուր է իսկական եւ մասնաւոր պատճառ տէրութեան, հոն ըլլայ նաեւ իսկական եւ մասնաւոր պատճառ ծառայութեան. արդ յայտնի է որ տէրութիւնն կը պատկանի

Աստուծոյ յատուկ եւ մանաւոր եղանակաւ. վասն զի ինքն ստեղծած է ամենայն ինչ, եւ վերին իշխանութիւն ունի ամեն լանի վրայ. ուստի եւ կը սրտկանի իրեն յատուկ ծառայութիւն, զոր յոյնք (Λατρεία) (յաթրիա) կ'անուանեն (Ս. Թ. Կ. Ժ. II-II. Կ. 81):

Իսկ արդ Աստուծոյ կողմանէ այս բարձրագոյն աչքութեան եւ մարդուն կողմանէ յատուկ ծառայութեան անմիջական հետեւութիւնն է որ մարդ պարտի ծառայել Աստուծոյ այն եղանակաւ, այն միջոցներով եւ այն վախճանի համար որ հաճելի ըլլայ Տեսան նախախնամութեան. ապա ուրեմն երբ հոճի ամենակարն բարձրացնել զմարդ վերջնական կարգի եւ վախճանի, եւ նոյն վախճանի համապատասխանող միջոցներն որոշէ. ինչ իրաւամբ պիտի կարենայ մարդ մերժել այն պաշտօնն զոր կը պահանջէ իւր Տէրն, իւր Արարիչն, իւր Աստուածն: Եւ ընդհակառակն ինչ իրաւամբ պիտի կարենայ հետեւել այն պաշտօնին որ իւր քնաց հաճելի երեւի, եւ այն պաշտօնն ինչպէս կրնայ Աստուծոյ ծառայութիւնն անուանել, երբ ուղղակի կերպով կը հակառակի Աստուծոյ կամաց, որով փոխանակ պաշտօն համարուելու, իրաւամբ զԱստուած կը զայրացնէ:

Բայց բանապաշտք կը մերժեն այս հետեւութիւնն. քննենք իրենց պատճառներն, որոց պիտաւորներն հետեւեալներն են:

Առաջին. Որ եւ իցէ զրական կրօնք՝ աւելորդապաշտութիւնն է. եւ հնարք քահանայից, եւ անվայել վասն գիտնականաց:

Երկրորդ. Միթէ բանականութեան զէմ չէ՞ բանին կրօնքն թողուլ եւ ուրիշ արտաքին եւ երկրորդական կրօնից հետեւիլ. որ առաջնոյն հետ յարաբերութիւն մը չունին:

Երրորդ. Բանապաշտն կը յարէ Բուստի հետ. «Ո՞վ կրնայ յիս մնդպարել իրր զանցառու պարտաւորութեանցս, եթէ կը սրտատեմ զԱստուած ըստ լուսոյ բանականութեան, զոր Աստուծմէ ընդունած եմ, եւ ըստ զգացմանց՝ զորս ինքն կ'ազդէ իմ սրտիս»:

Առաջին. Բանապաշտք՝ անդեալ դարու անկրօն փիլիսոփայից դասը կը հռչակեն իրր ճշմարիտ բարեբարներ մարդկութեան, որոնք գիտցան, կ'ըսեն, ազատել մարդկային բանն 'ի գերութիւնէ զերբնական կրօնից, որոնք պիտցան բարձրանալ 'ի զուտ եւ 'ի պարզ գաղտփար կրօնից որ ամենապատշաճ է Աստուծոյ եւ բանաւոր արարածի, գաղտփար զերծ ամեն արտաքին եւ գրական ձևերէ. որոնք չնն այլ ինչ բայց եթէ աւելորդապաշտութիւնք, եւ ծագած են ժողովրդոց աղիտութիւնէ եւ մուռնոյ ստացած են քահանայից հնարագիտութիւնէ եւ շահախնդրութիւնէ: Ուստի

որչափ աւելի քաղաքականութիւնն յառաջադիմութիւն կ'ունենայ ժողովրդոց մէջ, այնչափ աւելի կը տարածուի այս սարդ դաղասփար կրօնից:

Մոլոր կամ խմատէ զուրկ զաղափարներ են ասոնք որ ստէպ կը լսուին: Ո՞վ էին այդ բարերարք մարդկութեանս Վօլթէր, Բուսօ, ԹԱլլամպեր, Տխարրօ եւ այլք, որոց վարքը եւ բարքը կը յայտնեն մեզ թէ որքան արժանաւորութիւն ունէին այդպիսի պատուաւոր տիպոսի մը, Սկեստականք, անկրօնք, հայհոյիչք, զրպարտիչք եւ խտրեբայք:—Եւ ի՞նչպէս ազատեղին զմարդկութիւնն 'ի գերութենէ գերբնական կրօնից, որոնք են իրենց ապացոյցներն Աստուածային յայտնութիւնն խորտակելու, եւ կանգնելու այն զուտ եւ պարզ զաղափարն կրօնից որ միմայն կը վայելէ բանաւոր արարածի:—Եթէ մարդկութեան բարիքն էր իրենց նպատակն, պէտք չէր որ հրաւիրէին զմարդիկ սրաշտաման Աստուծոյ եւ կատարման պարտուց զոր ուզիլ բանն կը յայտնէ: Բայց արդիւնքն բոլորովին հակառակն կը ջուլնէ, մինչդեռ այդ բարերարք մարդկութեան յորդորեցին եւ մղեցին ժողովուրդները բացարձակ անաստուածութեան, եւ անարկելու ամէն բարոյականութեան ոկղբունք:—Իսկ գերբնականն մերժելու համար յառաջ բերուած պատճառներն 'ի հնուց արդէն քրիստոնէութեան թշնամեաց պատճառարանութիւններն են որոնց անդիմադրելի պատասխաններն եկեղեցւոյ Ս. Հարց կողմանէ քանի քանի անգամներ արդէն տրուած են: Պատճառարանութիւններ, որոնք առ հասարակ ծագում ունեցած են կամ մտար եւ անտեղի վարդապետութիւն մը քրիստոնէութեան ընծայելէն, եւ կամ մտար սկզբունք մը ընդունելէն իբր ճշմարիտ հետեւութիւն մարդկային ուղիղ բանականութեան: Եւ յերաւի, քննենք ուղղակի կերպով թէ ի՞նչ կ'իմանան բանապաշտք այդ նախադասութեամբ սարդ եւ զուտ զաղափար կրօնից, «ղերժ ամեն արտաքին ձեւերէ»:

Անորոշ խմատներ, որոնք բացատրութեան կարօտ են, եթէ պարզ եւ զուտ զաղափար՝ կրօնից ճշմարիտ զաղափար կը նշանակէ. ուղիղ է: Եւ այն ստան կը նշանակէ զաղափարն պաշտաման Աստուծոյ եւ մի միայն այն եզանտիկաւ որ նոյն ինքն Աստուած արարիչ իւր արարածէն կը պահանջէ. բայց ոչ երբէք կրնայ ուղիղ զաղափար համարուիլ երբ կ'ընծայէ այնպիսի խմատ մը որոյ հետեւութիւնն ըլլայ մերժումն կրօնից, որ կը հետեւի անմիջապէս բանապաշտից խմատիւ, մինչդեռ չեն ուղեր ու ճանհալ իրենց պարտաւորութիւնն Աստուծոյ կամաց հետեւելու,

նա մանաւանդ որ կրօնից պարզ գաղափարի իբր նշանն եւ պայմանն կը խնդրեն որ զերծ ըլլայ ամեն արտաքին ձեւերէ, որ ուղիղ իմաստ չի կրնար ունենայ բայց եթէ «բարոյն» չեւ ըտելով չուզեն իմանալ միմիայն աւելորդագաշտականն ձեւերն:— Որովհետեւ «բարոյն ուղիւն» պարտի պաշտել զԱստուած, այսինքն հոգեւոր եւ «բարոյն», ուստի միայն բանականութեան լուսով նաեւ պարտաւոր է մարդ իւր հպատակութիւնն ցուցնել արտաքին պաշտամամբ եւս, որ 'ի հարկէ ներքին զգացմանց համապատասխանելու է:

Իսկ զեւրբնական կրօնից արտաքին ձեւերն իբր աւելորդագաշտական կը մերժեն բանապաշար, որպէս թէ ռամիկ ժողովուրդն միայն յակում ունենայ զերբնական կրօնից, այնպէս որ ուրյառաջողութիւնն եւ քաղաքականութիւնն մուտք ունենայ, այլ կրօնից զգացմունքն ալ կ'անհետանայ:

Այս սովորական եւ անհիմն զրոգարտութեան պատասխանելու համար նախ զանազանելու ենք այն որ կրօնից էութիւնը կը կազմէ, եւ այն որ նորին արտաքին եւ անհատական գործադրութեան կը պատկանի. ուրիշ է կրօնից էական մասն եւ ուրիշ են այն ամեն երկրորդական եւ արտաքին ձեւերն, որ անհատից կողմանէ 'ի գործ կը գրտին: Եթէ այս վերջիններուն վրայ ըլլայ խնդիր՝ կը հաւանութք թէ սամիկ ժողովրդեան քով զիւրաւ կրնայ տեղիւր ունենալ. բայց այլ անհատական ձեւերու համար յայտնուել կրօնքն երբէք պատասխանատու չի կրնար համարուիլ, մանաւանդ թէ զանոնք անհետացնելու կը ջանայ: Իսկ այն որ կրօնից էական մասին կը պատկանի, զերազանց հանձարներն են որ նոյն զերբնական կրօնից յարգը լաւազոյն կերպով կը ձանձնան, եւ Աստուածային յատկութիւնն եւ հանրամասններն կ'իմանան եւ կը յայտնեն:

Ռամիկ ժողովրդեան հետ պիտի գտանք Օգոստինոս մը, Թոլմաս Ա. գուլնացի մը, եւ ասոնց նման հանձարներն, եկեղեցւոյ սուրբ Հարքը եւ վարդապետները, որոնք չէ թէ միայն ամենայն յարգութեամբ կը գաւանէին նոյն յայտնուել կրօնքն, այլ եւ անոր ամեն մասերը քննեցին, եւ բացատրեցին, անոր ճշմարտութեան ազդեցոյցներն սուին, զերազանց էութիւնն ըստ կարի մեկնեցին եւ նախատեսութեամբ լուծեցին այն ամեն զրոուարութիւններն՝ որ կրնային ծագիլ, եւ զորս յետոյ հերետիկոսք եւ անկրօն փիլիսոփայք յառաջ բերին:

Ո՞րչափ անհիմն է ուրեմն բանակրօնից կարծիքն թէ՛ գեր-

բնական կրօնքն անվայել ըլլայ գիտնականաց եւ նոյն կրօնից յայտնեալ վարդապետութիւններն քահանայից հնարքն համարել հարկ ըլլայ, մինչդեռ ճշմարտութիւնն հաստատուն եւ անփոփոխ է, եւ յայտնեալ ճշմարտութիւններն անփոփոխ եղանակաւ կը քարոզեն եկեղեցւոյ պաշտօնեայք եւ կ'ընդունին հաւատացեալք թէ՛ ռամիկ ըլլան եւ թէ՛ գիտնական: Բանակրօնք թող զրպարտեն քրիստոնեայ կրօնքն, իւր թշնամի քաղաքականութեան եւ յառաջադիմութեան ժողովրդոց, բայց ով որ անկողմնակալ հայուածք մը կը նետէ պատմութեան վրայ, զիւրաւ կը համոզուի թէ ինչպէս քրիստոնէութիւնն 'ի սկզբան անդ իւր հաստատութեան կերպարանափոխ ըրաւ աշխարհս, թէ ինչպէս մերժեց հեթանոսութեան լսաւարը որ ժողովուրդները մտաւորական եւ բարոյական ամենանարգ սնկման ենթարկած էր: Թէ ինչ ազդու եղանակաւ ձեռնառու եղաւ մոլորեալ մարդկութեան իւր ճշմարիտ արարիչն գտնելու, եւ իւր բնութեան եւ բանականութեան սնրան արարածոց վրայ ունեցած ազնուութիւնն եւ գերադանցութիւնն ճանչնալու, թէ ինչպէս ամեն ժամանակ պաշտպան եւ ջատագով հանդիսացաւ ճշմարիտ յառաջադիմութեան, բայց ոչ երբէք այն քաղաքականութեան եւ յառաջադիմութեան որ բանապաշտից բերանը նոյն է ընդ անկրօնութեան եւ անաստաւածութեան, եւ երանի թէ ժողովուրդը չհասնէին երբէք այդպիսի յառաջադիմութեան, որով Աստուծոյ եւ կրօնից քաղցր լուծը կոտորելով, անդուսպ կը գիմեն յանդուսկ կրից եւ ցանկութեանց ապականեալ բնութեան, գտնել յուսալով իրենց երջանկութիւնն եւ վախճանն երբ հաւատարին սնրան անասնոց:

Երկրորդ. Բայց կը պնդեն մեր հակառակորդք, մարդկային ուղիղ զգացմանց եւ ողջ բանականութեան հակառակ է թողուլ բանին կրօնքն, եւ արտաքին եւ երկրորդական կրօնից հետեւիլ, որ յարաբերութիւն մը չունենայ առաջնոյն հետ որպիսի են կրօնք գերբնական:

Հոս ալ ուղղելու շատ կէտեր կան, եւ այս է բանակրօնից առ հատարակ բռնած ընթացքը, որ գերբնական կրօնից դէմ ուղղելու ճշմարիտ զէնքեր չունենալով կը ջանան սուտ եւ սխալ յատկութիւններ ընծայել անոր, եւ կը շփոթեն յայտնեալ ճշմարիտ կրօնքն որ եւ իցէ կրօնական գրութեան հետ, որ աւելորդապաշտական եւ անսեղի վարդապետութիւններ գաւանի: Եւ առաջարկեալ գժուարութեան ուղղակի կերպով պատասխանելով կ'ըսենք թէ ինչիրը ամենապարզ է, այսինքն եթէ գերբնական

յայտնութիւնն եղած է, կրնայ այդ կրօնք մարդկային բանին հակառակ համարուիլ. կրնայ արտաքին եւ երկրորդական սեպուիլ. կրնայ ըսուիլ թէ գերբնականն յարարեցութիւն մը չունենայ բնականութեան հետ: Ոչ երբէք: Վասնզի մարդկային բանն պարտի ընդունիլ հետեւեալ ճշմարտութիւններն:

Ա. Աստուած բարձրագոյն եւ գերազանց էակ ըլլալով, արժանի է անտահման պաշտաման, ուստի ինչ որ կատարենք 'ի փառս իւր միշտ քիչ է իւր արժանաւորութեան, եւ ինչ պաշտօն որ պահանջէ մեզմէ, մենք աւելորդ կամ անպատշաճ չենք կրնար դատել, այլ պարտաւոր ենք իւր հրամաններն կատարելու:

Բ. Աստուած մեր տէրն է, եւ արարչութեան, պահպանութեան եւ նախախնամութեան տիտղոսներով իրաւունք ունի մեզի հրամայելու ինչ որ կամենայ, եւ մենք պարտաւորութիւն ունինք հնազանդելու, արդ երբ գերբնական պաշտամունք խնդրէ, ըստ պահանջման մարդկային բանին, չենք ազատ մեր կամաց եւ հաճոյից հետեւելու:

Գ. Աստուած 'ի խորհուրդս իւր չկրնար սխալիլ. եւ 'ի կամս իւր չկրնար պահանջել եթէ ոչ այն որ սուրբ եւ արդար է, եւ նպատաւոր իւր փառաց եւ մեր երջանկութեան, արդ երբ գերբնական կրօնք մը կը յայտնէ մեզի համար, մեր երջանկութիւնն այնու միայն կրնանք գտնել, եւ ուղիղ բանն կը պահանջէ որ հնազանդինք կամաց Աստուծոյ:

Դ. Վերջապէս մարդկային բանն կը յայտնէ թէ Աստուած է վերջին վախճան մարդոյ. ուստի իրաւունք ունի ուղղելու զմեզ մեր վախճանին այն միջոցներով, որ պտուշաճ կը գւտէ, եւ կարող է զինքն ընծայել իբր վախճան այն ձեւով որ իրեն հաճելի երեւի: Արդ երբ գերբնական կերպն ընտրէ, պէտք է հնազանդինք եւ երախտագէտ ըլլանք իւր բարութեան:

Կը հարցնենք ուրեմն, կրնայ ըսուիլ թէ ուղիղ բանն կը հակառակի գերբնական կրօնից, մինչդեռ նոյն իսկ բանն է որ կը պահանջէ այն կրօնից գաւառումն:

Կրնայ յայտնեալ կրօնքն արտաքին եւ երկրորդական հակարուիլ, մինչդեռ բնականութեան ուղիղ սկզբանց հետեւութիւնն է զայն ընդունիլ իբր պաշտամունք գոր կը խնդրէ Տէրն, Արարիչն իւր արարածէն, այնպէս որ՝ ով որ զանցառու կը զըտնուի, կը հակառակի կամաց Աստուծոյ եւ կը զրկուի իւր վախճանէն:

Վերջապէս կրնայ ըսուիլ որ դերբնականն յարաւերութիւն մը չունենայ բնական կրօնից հետ, մինչդեռ առաջինն երկրորդին կատարելագործութիւնն է, եւ նոյն խոյ ընտան լոյսն է որ կը ստիպէ զմարդ ընդունել յայտնեալ կրօնքն:

Երբեք. Անյնինք Վերջին պատճառին, որով բանակրօնն Բուստօի խօսքերն իրեն յատկացնելով կըսէ. «Ո՞վ կրնայ զիս մեղադրել իբր զանցառու պարտաւորութեանցս երբ կը պաշտեմ զԱստուած ըստ լուսոյ բանականութեան՝ զոր Աստուծմէ ընդունած եմ. եւ ըստ զգացմանց՝ զորս ինքն կ'ազդէ իմ սրտիս»:

Կը պատասխանենք Բուստօի եւ բանակրօնից թէ մեղադրելի է իրենց ընթացքն, յանցաւոր են առաջի Աստուծոյ, որովհետեւ չեն պաշտեր զԱրարիչն ըստ պահանջման բանին, եւ ըստ զգացմանց իրենց սրտին: Վասնզի ողջ բանականութիւնն կուզէ որ երբ Աստուած ինդրէ, մարդն պարտաւոր ըլլայ ընծայել իրեն պաշտօն զերբնական: Վասնզի ուղիղ զգացմունք սրտի կը մղեն զմարդ հնազանդելու Աստուծոյ յամենայնի եւ ըստ ամենայնի: Ուստի յանցաւոր է բանապաշտն որ կը մերժէ բանականութեան այս պահանջմունքը. եւ կը խեղդէ սրտին այդ զգացմունքը: Ապա ուրեմն չպաշտեր զԱստուած ըստ պահանջելոյ մտաց եւ սրտի: Ապա ուրեմն կ'անարդէ զԱստուած եւ կը հակառակի կամաց Նորին:

Պետրոս Վ. Գոյունեան



ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

Ի ՊԷՏՍ ԱՄԵՆԵՑՈՒՆ

Շարայարութիւն (*)

Երկրորդ Կրթան+

Նախորդ կրթմանը մէջ պատուիրեալ դիրքն առ բազուկներդ կոտրէ, սրունքներդ միացուր իրարու եւ դարձուր սակաւիկ մի յետկոյս, բայց ոտքերդ գետնին չչպչին, վեր ել՛ բազուկներուդ ուժովը, վար իջի՛ր, դարձեալ վեր ել՛ այս շարժումները շարունակէ որչափ անգամ որ ոյժդ թոյլ տայ:

Երրորդ Կրթան+

Ձեռներուդ փոփոխակի շարժմամբ երթեւեկէ գաւազաններուն վրայ յառաջ եւ յետկոյս:

Չորրորդ Կրթան+

Երթեւեկէ ոստնդով:

Հինգերորդ Կրթան+

Նետէ սրունքներդ յառաջ կամ յետկոյս, մերթ աջակողմեան եւ մերթ ձախակողմեան գաւազաններուն վրայ:

Վեցերորդ Կրթան+

Գետնն նետուէ, յառաջ կամ յետկոյս, յաջակողմ եւ ձախակողմ:

Նօթներորդ Կրթան+

Կատարէ հետեւեալ պատուերները փայտէ գաւազաններուն վրայէն սրունքներու շարժմամբ անցնելու համար:

Դիր ձեռներդ գաւազանաց վրայ. վեր բռնէ գլուխդ, նետէ յառաջ սրունքներդ իրարու միացուցած, սպա յետկոյս, դարձ-

(*) Տե՛ս Պատկեր Բ. Տարէ, էջ 208

եալ յառաջ, եւ այս անգամ անցնւր զայնս գաւաղանին վրայէն՝ ձախ ձեռնսդ աջին տեղ դնելով: յետոյ ինկի՛ր ոտքերուդ ծայրին վրայ կարթերդ կոտրելով:

Կրկնէ միւս կողմ մի եւ նոյն կրթանքը:

Վար նետուելու ժամանակ ջանաս՝ զի մարմինդ լաւ մղես, որպէս զի կռնակիդ կամ զարշապարներուդ վրայ չխնկնաս: Այս նպատակի համնելու համար, պէտք է զի երբ երրորդ անգամ սրունքներդ յառաջ նետես՝ նոցա բարձրագոյն զիբքի ժամանած պահուն՝ ոտքերդ ուժգին մղես՝ սրունքներդ կոտրելով, եւ երբ ձեռներդ զատես գաւաղաններէն՝ մարմնոյդ վերի մասը մղես յառաջ, նոյնպէս եւ բաղուկներդ ձգտած:

*
**

ՏՐԱՊԻՉ

Այս գործիքը կը բաղկանայ հորիզոնաղիւր եւ շարժուն վայտեայ գաւաղանէ, որ իւր երկու ծայրերէն չուանով կախուած է հաստատուն գերանէ:

Այս գործիքի վրայ կատարուած կարեւոր շարժումնք կը զօրացունեն լանջաց մկանքը, գաստակները եւ ուտերը, կը սովորեցունեն գլխիվայր կենսւ առանց նեղութիւնս զգալու:

Ի սկզբանս պէտք չէ զի տրապիղի գաւաղանն ուտերէն վեր լինի, որպէս զի տղայք քաջ ըմբռնեն շարժմանց եղանակը: Բայց ուսնելէն յետոյ պէտք է տրապիղը բարձրացունել զըլխէն 0,40 կամ 0,50 հարիւրորդամեղրի չափ վեր, որպէս զի ոտքերը դետինը չզպչին շարժմանց ժամանակ:

Առաջին Կրթանք

Կեցի՛ր տրապիղի ներքեւ՝ սրունքներդ իրարու միացուցած. վեր առ ձեռներդ, բռնէ՛ գաւաղանը՝ ձեռներդ իրարմէ՛ հետու ուտերուդ լայնութեանը չափ. բարձրացի՛ր բաղուկներդ կարճեցունելով, եւ բեր կզակդ գաւաղանին բարձրութեանը, եւս տար գլուխդ եւ կորէ՛ մարմինդ:

Բեր ստոմաքոյ գաւաղանին վրայ. այս գիրքի մէջ բաղուկներդ ձգտեալ կը լինին. գարձուր յառաջ ձեռներդ. ծոխ՝ գլուխդ յառաջ, գարձի՛ր քու վրայդ եւ ինկի՛ր ոտքերուդ վրայ մեղմիկ:

Երբորդ Կրթանք

Կեցիր տրապիզին ներքեւ. կախուէ՛ գաւազանէն ձեռնե-
րովը, բլթամատերդ վար եւ միւս մատերդ վեր: Միացուր ոտքե-
րդ իրարու եւ կախ թողով բազուկներդ, վեր հանէ՛ յաջորդա-
բար սրունքներդ յառաջ մինչեւ հորիզոնական զիւրքը եւ կեցի՛ր
այսպէս որչափ որ կրնաս. յետոյ վար սու սրունքներդ տակաւ
առ տակաւ, թո՛ղ խտրոյն գաւազանն եւ ինկի՛ր գետին մեղմա-
բար:

Երբորդ Կրթանք

Կեցիր տրապիզին ներքեւ, բռնէ՛ գաւազանը նախորդ եւ
զանակաւ՝ ձեռներդ դնելով իրարմէ հեռու ուսերուդ լայնու-
թեանը չափ. յետոյ բարձրացիր սակաւ մի բազկացոյ ուժովը, որ-
պէս զի ոտքերդ գետինը չըպչին. ապա մղէ՛ ուժգին յետկոյս
ուսերդ, եւ սրունքներդ կտտրելով՝ բարձրացուր զայնս այնպէս
զի անցնին բազկացոյ եւ գաւազանին մէջ տեղէն. երկնցուր
բազուկներդ յաջորդաբար՝ այս շարժումը զիւրացունելու համար.
յետոյ շարունակէ՛ վար իջեցունելու սրունքներդ եւ կարկառէ՛
յետկոյս զայնս որչափ որ կրնաս: Սոյն զիրքի մէջ պահ մի կե-
նայէ՛ք յետոյ, թո՛ղ ի միատին ձեռներդ եւ ինկի՛ր գետին մեղմա-
բար՝ բազուկներդ խտրոյն յառաջ բերելով:

Չորրորդ Կրթանք

Ե՛լ տրապիզին վրայ նախորդ եզանակաւ եւ սու առաջին
կրթանքի մէջ նշանակուած զիրքը: Երբ ստոմաքսդ գաւազանին
վրայ կռթնի, պարզէ՛ բազուկներդ երկայնաձիւղ եւ բռնէ՛ չու-
անը աջ ձեռնով՝ աջ բազկիդ վրայ քաշելով զայն. շրջէ՛ մար-
մինդ թեթեւութեամբ՝ գաւազանին վրայ նստելու համար:

Դի՛ր ձախ ձեռնդ ավին տեղ՝ միւս չուանը բռնելով աջ ձեռ-
նով եւ մարմնոյդ վերի մասը յետկոյս ծռելով. բեր կարթերդ
գաւազանին վրայ ձեռներդ եւս սահեցուր չուաններուն վրայէն
մինչեւ գաւազանին վրայ. յայնժամ թո՛ղ յետկոյս մարմինդ՝
կտրելի եզամբին չափ կախ եւ ոտքերդ միշտ իրարու միացուցած.
սոյն զիրքի մէջ քաշէ՛ ձեռներդ գաւազանէն: Յետոյ կարթերովդ
սեղմէ՛ գաւազանը, բարձրացուր մարմինդ յառաջ, բռնէ՛ գաւա-
զանը եւ պարզէ՛ բոլոր մարմինդ յետկոյս մինչեւ որ երրորդ զիր-

քըն անուս Յայնժամ մի դաստակից ուժովը բռնէ՛ մարմինդ եւ թո՛ղ միւս ձեռնդ: Այս կերպով մարմինդ կիսաչըջանակ մը կընէ բնականապէս՝ զինքը կախ բռնող դաստակից վրայ, եւ միւս ձեանց կուզայ անմիջապէս անդ ուր էր թողլէ՛ց առաջ. յայնժամ մարմինդ կախ կը գտնուի գարձեալ բնական զիրքի մէջ: Այնուհետեւ բարձրացո՛ւր յառաջկոյս սրունքներդ բազկացդ ուժովը, սրպէս զի գարձեալ անցունես մարմինդ գաւաղանին վրայէն, եւ սրապիզին միւս կողմէն իջի՛ր վար առանց ցնցման՝ թեթեւութեամբ գետին ինկնալու համար:


*
**

ՔԱՅԼԱՄԱՐՉ ԱՐՍԳ

Կարելի է նախ կատարել այս քայլամարզը կեցած տեղդ՝ Փակէ ձեռներդ, տակաւ մի յառաջ բռնէ՛ դաստակներդ. բարձրացո՛ւր ձախ ոտքդ այնպէս զի ազդրդ ծռած լինի յառաջ եւ սրունքդ ալ՝ յետկոյս. յետոյ, երկար ժամանակ այս զիրքի մէջ չկենալով, շուտ գետին զիր ոտքդ առանց զարնելու, եւ իսկոյն վեր վերցուր ալ ոտքդ. այսպէս զատկատէ ոտքերուդ ծայրին վրայ յաջորդաբար երապելով շարժումներդ, այնպէս զի մի վայրկենի մէջ 200 անգամ լինի՛ Ուղիղ բռնէ՛ մարմնոյդ վերի կողմը եւ լանջքդ ալ գուրս զցուած:

Շարայարեյի

ՅՈՎԸ. Վ. ԱՃԷՄԵԱՆ



ՊԱՏԿԵՐ տասն և հինգ օրը մի անգամ կը հրատարակուի:

Բաժանորդագրութեան տարեկան գինն է
Կ. Պօլսոյ համար 40 դահեկան
Գաւառաց և՛ օտար երկիրներու համար
բոլորտարի ծախքն ի միասին հաշուելով 50 « «

Իշխարանցիւր թիւ 2 դահեկան

ՊԱՏԿԵՐԻ խմբագրատունն է ի Բերա, Եւշի փողոց
Թիւ 1, ուր պետք է դիմել բաժանորդագրութեան և՛ քերթին
վերաբերեալ այլ ամենայն խնդրոց համար:

RÉDACTION DU **BADGUERE**

Constantinople, Péra, rue YÉCHIL N ° 1

معرف نظارت جلیله سنک رخصتیه طبع اولمشدر